Հետազոտական աշխատանք

Թեմա՝ « Հայկական կոմիքսներ»
Կատարող՝ Տարոն Անտոնյան
Ղեկավար՝ Մարիետ Սիմոնյան
Ավագ դպրոց — 10-րդ դասարան

**Բովանդակություն**


1. Ներածություն
2. Հայկական և ամերիկյան կոմիքսների համեմատություն
3. Ամփոփում
4. Օգտագործած աղբյուրներ


**Ներածություն**

Կոմիքսը պատկերային պատմություն է, որտեղ պատմությունը պատմվում է հիմնականում ոչ թե տեքստի, այլ նկարազարդումների միջոցով:

Կոմիքսը կազմված է պատկերների շարքից, որոնց օգնությամբ հեղինակը պատմում է որևէ պատմություն: Ուղղակի խոսքը կոմիքսներում սովորաբար փոխանցվում է օվալաձև, սպիտակ հատվածների (ամպիկների) միջով, որոնք սլաքով ուղղված են խոսող կերպարի բերանին կամ գլխին: Հեղինակի խոսքերը կամ գլխավոր հերոսի մտքերը հիմնականում գրվում են հատուկ ուղղանկյունների մեջ, որոնք սովորաբար տեղադրվում են էջի վերևի հատվածում:

Կոմիքսների ինդուստրիան Հայաստանում դեռ զարգացման վաղ փուլում է, սակայն այս վերջին տարիների ընթացքում այն ավելի ակտիվ և տեսանելի է դարձել: Ավելի ու ավելի շատ նկարիչներ, հեղինակներ և հրատարակիչներ են ներգրավված կոմիքսների ստեղծման և տարածման մեջ:

Թեև Հայաստանում կոմիքսների ինդուստրիան դեռ զարգացման վաղ փուլում է, բայց կոմիքսների նկատմամբ հետաքրքրությունն աճում է, և դրանք ավելի ճանաչված են դառնում երկրում:

Հայկական կոմիքսների զարգացումն ունի մի քանի կարևոր ասպեկտներ և առավելություններ.

1. Հայկական կոմիքսների զարգացումը թույլ է տալիս հայ նկարիչներին, հեղինակներին և սցենարիստներին արտահայտել իրենց մշակույթն ու ավանդույթները յուրահատուկ գեղարվեստական ֆորմատի՝ կոմիքսների միջոցով:

2. Հայաստանում կոմիքսների ոլորտի զարգացումը նպաստում է ամբողջ ստեղծագործական ինդուստրիայի աճին: Դա նոր հնարավորություններ է բացում նկարիչների, գրողների, խմբագիրների, հրատարակիչների և կոմիքսների ստեղծման մեջ ներգրավված այլ մասնագետների համար: Բացի այդ, այն նպաստում է երկրում մշակույթի և արվեստի բազմազանությանը:
3. Իր հասանելիության և ընկալման հեշտության շնորհիվ կոմիքսները կարող են օգնել մարդկանց ազատ արտահայտել իրենց մտքերն ու ստեղծագործական գաղափարները: Կոմիքսը լավ միջոց է նկարիչների և գրողների համար, ովքեր ցանկանում են կիսվել իրենց գաղափարներով և հետաքրքրել ընթերցողներին տարբեր պատմություններով:

<u>Հայկական և ամերիկյան կոմիքսների համեմատություն</u>

Ես կվերցնեմ հայկական ամենահանրաճանաչ կոմիքսը՝ «Վիշապ. Տուրբոկնոջ հարձակումը», և կհամեմատեմ նույն ժանրի ամերիկական մի կոմիքսի հետ՝ նշելով դրա առավելություններն ու թերությունները:

«Վիշապ. Տուրբոկնոջ հարձակումը» հայկական սուպերհերոսային կոմիքս է, որը հրատարակվել է 2020 թվականին: Ես այն կհամեմատեմ ամերիկական բավականին հայտնի կոմիքսների սերիայի՝ «Ultimate Spider-Man»-ի առաջին հատորի հետ:

Սկզբի համար ես կվերապատմեմ «Վիշապ. Տուրբոկնոջ հարձակումը» և «Ultimate Spider-Man Vol. 1» կոմիքսները, իսկ հետո համեմատության միջոցով կնշեմ առաջինի առավելություններն ու թերությունները:

«Վիշապ. Տուրբոկնոջ հարձակումը» սկսում է նրանից, որ իրեն Վիշապ անվանող մի սուպերհերոս գերությունից ազատում, փրկում է մի տղայի: Այդ ընթացքում տղան Վիշապին անընդհատ հարցեր էր տալիս, որոնց պատասխաններից մենք կարող ենք հասկանալ, որ այդ հերոսին փոխանցվել է վիշապի ուժը; որը դարձնում է նրան սովորական մարդուց ֆիզիկապես ավելի ուժեղ: Վիշապը տղային տանում է իր մոտոցիկլի մոտ, որ տանի նրան այդտեղից, բայց վերջին պահին գալիս են թռչող կոստյումներով ինչ-որ մարդիկ և չեն թողում նրենց փախչել:

Դրանից հետո ժամանակը կանգնում է, և գլխավոր հերոսը սկում է խոսել ընթերցողների հետ, պատմելով, թե ինչպես է սկսվել այս պատմությունը:

Մեզ ցույց են տալիս, թե ինչ էր տեղի ունենում երկու օր առաջ: Գլխավոր հերոսը՝ Հայկը, Տաթև անունով մի աղջկա հետ գնում է Արեգի՝ Տաթևի ընկերուհու որդու ծնունդին: Միաժամանակ Հայկը իր ընկերոջ՝ Գոռի հետ մշտական կապի մեջ է, ով նրան հուշում է, թե ոնց իրեն պահի և ինչ անի:

Տաթևի ընկերուհու ամուսինը պարզվում է հայտնի պրոֆեսոր Ալեքսանդր Միրաքյանն է, ով գիրք ուներ գրված։ Հայկը խնդրում է, որ պրոֆեսորը Գոռի համար գիրք մակագրի։ Բայց հանկարծ, առաստաղի ապակին կոտրելով, վերևից ներս են մտնում կոստյումներով թռչող մարդիկ։  Նրանք գերի են վերցնում պրոֆեսորի որդուն՝ Արեգին, ասելով, որ հայրը չդիմի ոստիկանություն և սպասի իրենց հրահանգներին, ինչից հետո Արեգի հետ թռչում-գնում են։

Հայկը արագ վազում է դեպի Գոռի մեքենան, որ հագնի իր սուպերհերոսի կոստյումը։ Հագնվելուց հետո նա նստում է իր մոտոցիկլը և սկսում է հետապնդել այդ թռչող մարդկանց։ Մի պահ թռչող մարդիկ իջնում են ներքև։ Նրանցից գլխավորը ներկայանում է որպես Տուրբոկին և ասում է Վիշապին, որ չխառնվի իրենց գործերին։ Դրանից հետո նրանք նորից թռչում են օդ։ Հայկը փորձում է փրկել տղային, բայց ձախողվում ու վերադառնում է տուն։

Արդեն տանը Հայկը հեռախոսով զրուցում էր իր ընկերուհու հետ։ Տաթևը նեղացել էր Հայկից, քանի որ երբ Տուրբոկինը գերի վերցրեց Արեգին, նա ուղղակի փախավ։ Հայկը փորձեց արդարանալ՝ թաքցնելով իր սուպերհերոսական կյանքը, բայց ոչինչ չստացվեց։

Դրանից հետո Հայկը թաքուն մտնում է պրոֆեսորի տուն և Գոռի ստեղծած սարքով նրբեռնում է նրա հեռախոսի ամբողջ պարունակությունը։

Պարզվում է, որ պրոֆեսորը մի հայտնագործություն է արել, որի օգնությամբ կարելի է ցանկացած վառելիք տասնապատիկ հզորացնել։ Եվ հենց այդ հայտնագործության բանաձևն էլ Տուրբոկինը պահանջում է պրոֆեսորի որդու դիմաց։

Երբ Հայկը պրոֆեսորի հեռախոսի միջի տվյալները բերում է Գոռին, նա մի բան է նկատում։ Պահանջներով վիդեոյի մեջ, որը Տուրբոկինը ուղղարկել էր պրոֆեսորին, լսվում էր կարկուտի ձայնը։ Իսկ կարկուտ այդ օրը եղել էր միայն մի տեղ։ Այդպես, գլխավոր հերոսը իմանում է, թե որտեղ են հանցագործները պահում Արեգին։

Վիշապը արդեն ուզում էր գնալ Արեգի հետևից, բայց հանկարծ Տուրբոկինը պրոֆեսորի հեռախոսին ուղղարկում է փոխանակման տեղն ու ժամը։ Պրոֆեսորը գրեթե տալիս էր Տուրբոկնոջը իր հայտնագործության բանաձևը, բայց վերջին պահին գալիս է Վիշապը և խլում վերջին էջերը։ Տուրբոկինը նորից փախչում է՝ ճանապարհին կամրջի մի մասը կոտրելով։ Վիշապը կրին փորձում է նրանց հետապնդել, բայց կամրջի այդ կոտրված հատվածից քիչ է մնում մի բեռնատար վայր ընկներ։ Հայկը կանգնում և փրկում է բեռնատարի վարորդին։ Դրանից հետո նա վերադառնում է Գոռի մոտ, և նրանք, ֆուրգոնով գնում են այնտեղ, որտեղ պահում են պրոֆեսորի որդուն։ Վիշապը դուրս է գալիս և գնում է նրան ազատելու։

Իսկ հիմա ամեն ինչ վերադառնում է կոմիքսի սկզբին։ Վիշապը ազատում է Արեգին։ Նրանք գնում են  մոտոցիկլի մոտ, որ փախչեն այդտեղից, բայց վերջին պահին գալիս է Տուրբոկինն իր մարդկանց հետ։

Վիշապը ձևացնում է, թե հանձնվում է, բայց ասում է տղային, որ նա փախչի և նստի Գոռի կանաչ ֆուրգոնը։ Տուրբոկինը հարվածում է վիշապի մեջքին և համարյա հաղթում է, բայց Հայկը նրան խոսեցնում է և անսպասելի հարվածում։

Նրա վրա հարձակվում են Տուրբոկնոջ կամակատարները, բայց նա շատ արագ հաղթում է նրանց։  Նրանք փորձում են փախչել, բայց վերևում նրանց սպասում էին ուղղաթիռներով ոստիկանները։ Արդեն գետնին ընկած Տուրբոկինը վերջին ուժերով փորձում է սպանել Վիշապին։ Բայց նա իր հերթին ամբողջ իր ուժը հավաքում է ձախ ձեռքի մեջ և հարվածում է  գետնին, ինչը ստեղծում է հզոր հարվածային ալիք։

Երբ հանցագործները պարտություն կրեցին և Արեգին իր հայրիկի մոտ հասցրին, Վիշապին մոտեցան նույնիսկ ոստիկանները, որ նրա հետ սելֆի անեն, կամ ուրիշ դրա նման բան։ Դրանից հետո նրան մի հատ էլ խաշի հրավիրեցին, բայց նա արդեն գնաց։

Հաջորդ օրը Հայկը Տաթևի հաշտվեցին և միասին գնացին հանդիպման։ Հանկարծ զբոսնելու ժամանակ նրանք նկատում են խաղալիքների խանութի դարակի վրա Վիշապի ֆիգուրկան և որոշում են այն գնել Արեգի համար։ Եվ ամենավերջում նրանք զրուցելով հեռանում են՝ շրջապատված վարդերով, որոնք սրտիկների տեսքով էին։

Այսպիսին է հայկական ամենահանրաճանաչ կոմիքսը։

Իսկ հիմա ես մի քիչ ավելի կրճատ կվերապատմեմ ամերիկական, միլիոնավոր մարդկանց կողմից սիրված կոմիքսների սերիայի՝ «Ultimate Spider-Man»-ի առաջին հատորը, որը դուրս է եկել դեռևս 2000 թվականին։

Կոմիքսը սկսում է նրանից, որ մեզ ծանոթացնում են գլխավոր հերոսի՝ Փիթեր Փարկերի հետ։ Նա սովորական մի տղա է, ով սովորում է ավագ դպրոցում և հետքրքրվում է գիտությամբ։ Մեզ ցույց են տալից, որ նա իր հասակակիցների և դասընկերների կողմից ծաղրանքի, բռնության և ընդհանուր բուլլինգի է ենթարկվում։ Բայց ոչ բոլորն են նրան վատ վերաբերվում։ Փիթերը ունի երկու մոտիկ ընկեր՝ Հարրի Օզբորնն ու Մերի Ջեյն Ուոթսոնը։

Մերի Ջեյնը Փիթերի հարևանուհին է և մանկության ընկերը, ով միշտ պատրաստ է օգնել և աջակցել նրան։ Իսկ Հարրին հարուստ, ազդեցիկ մի բիզնեսմենի և գիտնականի՝ Նորման Օզբորնի որդին է, ով երբեմն պաշտպանում է Փիթերին նրան նեղացնող դասընկերներից։

Մի օր, նրանք ամբողջ դասարանով գնում են Հարրիի հայրիկի լաբորատորիա՝ էքսկուրսիայի։ Այնտեղ Փիթերին կծում է գենետիկորեն մոդիֆիկացված սարդ, ինչից

հետո նա ուշաթափվում է: Ինչ-որ ժամանակ անց նա արթնանում է դպրոցական ավտոբուսում, որն արդեն տանում էր բոլորին հետ՝ դպրոց: Դպրոցից նրան վերցնում է մորաքույրը, և արդեն տանը նա խորը քուն է մտնում:

Հաջորդ օրը, երբ նա արդեն դպրոցում էր, նրա դասընկերներից մեկը ցանկնում է նրան հարվածել: Բայց Փիթերը ինչ-որ կերպ զգում է դա և տապալում է նրան գետնին: Ինչ-որ ժամանակ անց, Փիթերը հասկնում է, որ այդ սարդը, կծելով իրեն, փոխանցել է իրեն իր կարողությունները: Նա դառնում է շատ ավելի ուժեղ, ճկուն, կարողանում է կանխատեսել ցանակացած շարժում և կարողանում է կպչել ցանկացած հարթությանը:

Փիթերը սկսում է հագնել հատուկ կոստյում և մասնակցել շոուում, որտեղ նա ռինգում մրցում էր ըմբիշների դեմ՝ օգտագործելով իր ուժերը, փող և համբավ վաստակելու համար: Նա նաև ընդունվում է դպրոցի բասկեդբոլի թիմ, ինչի պատճառով սկսում է ավելի քիչ ժամանակ տրամադրել դասերին:

Մի օր, տուն վերդառնալուց, Փիթերը փողոցում հանդիպում է հացագործի, ով մի խանութ էր թալանել: Նա կարող էր նրան կանգնեցնել, բայց չարեց դա, մտածելով. «Դա իմ խնդիրը չէ: Ես առանց այդէլ շատ գործ ունեմ»:

Տանը, վատ գնահատականները տեսնելով, նրա վրա զայրացան հորեղբայրն ու մորաքույրը, ինչից հետո նա վրավորեց նրանց և փախավ տնից: Ինչ-որ ժամանակ անց, հասկանալով իր սխալը, Փիթերը որոշեց վերառնալ տուն և ներողություն խնդրել: Բայց տուն հասնելով, նա իմանում է, որ ինչ-որ գող փորձել էր թալանել իրենց, և երբ իր հորեղբայր Բենը ասել է, որ փող չունի, հանցագործը սպանել է նրան:

Կատաղած Փիթերը, լսելով իր տանը գտնվող ոստիկաններից, թե որտեղ է թաքնվում հանցագործը, հագնում է իր կոստյումը և գնում գողին գտնելու: Գտնելով իր հորեղբորը սպանողին, նա հասկանում է, որ նա այն մարդն էր, ով ցերեկը խանութն էր թալանել, և ում ինքը կարող էր կանգնեցրել: Նա հասկանում է, որ իր էգոիզմի և անպատասխանտվության պատճառով մահացավ իր հորեղբայրը: Այսուհետ,Փիթերը սկսում է օգնել սովորական մարկանց և օգտագործել իր ուժը՝ հանցագործության դեմ պայքարելու համար, անվանելով իրեն Սարդ-Մարդ:

Սա էլ «Ultimate Spider-Man»-ի առաջին հատորի վերապատումն էր: Իսկ հիմա, ժամանակն է համեմատել այս երկու ստեղծագուրծությունները:

Համեմատումը կսկսեմ գլխավոր հերոսներից: Առաջին հայացքից նրանք բավականին նման են: Երկուսն էլ ամաչկոտ տղաներ են, ովքեր բոլորից գաղտնի սուպերհերոսություն են անում՝ փրկելով մարդկանց կյանքեր: Բայց եթե նայենք ավելի խորը՝ կարելի է տեսնել մեծ տարբերություն:

Փիթերի դեպքում մեզ ցույց են տալիս նրա ամբողջ անցած ճանապարհը՝ սովորական տղայից մինչև սուպերհերոս: Մեզ ցույց են տալիս, թե ինչպես է նա ստանում իր ուժը և ոնց է դրանք սկզբից օգտագործում անձնական շահի համար: Ոնց է նրա սխալի պատճառով մահանում նրա հարազատ մարդը: Ոնց է հասկանում, որ մեծ ուժը մեծ պատասխանատվություն է, և ոնց է սկսում օգտագործել իր ուժը մարդկանց օգնելու նպատակով:

Իսկ Հայկի մոտ լրիվ հակառակն է: Նրան մեզ միանգամից ցույց են տալիս որպես սուպերհերոս: Մեզ ցույց չեն տալիս, թե ինչպես է նա ստացել իր ուժը, և ինչու է որոշել դառնալ սուպերհերոս և պայքարել հանցագործության դեմ, և ես չեմ հասկանում նրա մոտիվացիան:

Հենց կոմիքսի սկզբում Հայկն ասում է, թե ինքը սուպերհերոս չէ, այլ պարզապես հասարակ տղա է, ում փոխանցվել է վիշապի ուժը, բայց ուղղակի ասելը հերիք չէ: Մեզ ցույց չեն տալիս նրա կյանքը մինչև նրա ուժը ստանալը, ինչի պատճառով ես դժվարանում եմ  է հավատալ, որ Հայկը իսկապես «հասարակ տղա է, ում փոխանցվել է վիշապի ուժը»:  Որպեսզի դա հավաստի լինի, և ընթերցողը իսկապես հավատա դրան, պետք է ցույց տալ, այլ ոչ թե ասել:

Նաև ամբողջ կոմիքսի ընթացքում Հայկը թույլ չի տալիս ոչ մի լուրջ սխալ և համարյա միշտ նրա մոտ ամեն ինչ ստացվում է: Պատմության սկզբից մինչև վերջ կերպարը ոչ մի զարգացում չի ապրում և կյանքից ոչ մի դաս չի քաղում: Իսկ դա շատ կարևոր է, երբ հերոսը դեռ իր ուղու սկզբում է գտնվում:

Եվ նույնն էլ կարելի է ասել այս պատմության գլխավոր բացասական կերպարի՝ Տուրբոկնոջ մասին: Նրան, որպես կերպարի, ոչ մի ձև ցույց չեն տալիս: Ցույց չեն տալիս, թե ինչպես է նա ստեղծել իր թռչող կոստյումը և ինչու է դարձել հանցագործ: Նա չար է, որովհետև չար է: Իսկ նրա մոտիվացիան՝ գրավել ողջ աշխարհը, շատ ծեծված և տափակ թեմա է:

Նաև կուզեի ուշադրություն դարձնել այն բանին, որ «Ultimate Spider-Man»-ում այդ ամբողջ պատմությունը տեղավորվում է մոտ 150 էջում և 5 գլխում, ինչը թույլ է տալիս հեղինակներին ավելի շատ ուշադրություն դարձնել մանրուքների վրա և ոչինչ բաց չթողել:

Իսկ Վիշապում ամեն ինչ կատարվում է ընդամենը 27 էջում, ինչը ահավոր քիչ է նման մասշտաբի պատմության համար: Քանի որ այդքան շատ իրադարձություններ տեղի են ունենում այդքան կարճ ժամանակահատվածում, դու պարզապես չես հասցնում խորանալ պատմության մեջ և նորմալ հասկանալ, թե ինչ է կատարվում: Դու ուղղակի հինգ րոպեում կարդում ես, իսկ հետո դնում մի կողմ և մոռանում:

«Վիշապ. Տուրբոկնոջ հարձակման» գործի միանշանակ առավելությունը ավելի խոսակցական հայերենի օգտագործումն է: Կոմիքսի շնորհանդեսին Նարեկ

Մարգարյանը՝ սցենարի հեղինիակը, ասաց, որ իրենք որոշել են այդպես անել, որ չկոտրվի ուսանող հերոսի այդ կերպարը և խոսի իր կերպարին համահունչ: Եվ դաիմ կարծիքով շատ ճիշտ որոշում էր, քանի որ կերպարները խոսում են իրական մարդկանց նման, և դա նրանց ավելի է կենդանացնում:

Վերջում նաև կուզեի խոսել այս կոմիքսի նկարչական մասից: Իրականում այն այդքան էլ վատը չէ: Կադրերը, ռակուրսները և կերպարների դիրքերը բավականին դինամիկ են, իսկ գույները տեղին են: Իհարկե, լինում է որ նույն կադրը մի քանի անգամ է օգտագործվում, կամ մի տեղ կերպարի դեմքը շատ տարօրինակ է նկարված, բայց դա ներելի է: Եվ ընդհանուր, չնայած որ կան բավականին տարօրինակ պահեր, ես կարող եմ գովել նկարչին:

<u>Ամփոփում</u>

Այսպիսով, «Վիշապ. Տուրբոկնոջ հարձակումը», որը հայկական ամենահանրաճանաչ կոմիքսն է, ունի 3 հիմնական լուրջ խնդիր, և դրանցից ամեն մեկն ունի իր լուծումը.

1. <u>Կարծրատիպային կերպարներ՝ առանց նորմալ մոտիվացիայի</u>
   Խնդիր. Երբ կերպարները ցուցադրում են միայն «չար» կամ «բարի» գծեր՝ առանց հստակ պատճառների, դա դարձնում է նրանց անհետաքրիր և անբնական: Նրանց գործողություններն ու արարքները անհամոզիչ են թվում, և անհասկանաի է, թե ինչու են նրանք իրենց պահում այնպես, ինչպես պահում են:
   Լուծում. Ցույց տվեք հերոսի անցյալը, նրա մոտիվացիան, նրա ներքին կոնֆլիկտները: Օրինակ՝ ինչո՞ւ է չար կերպարը չար: Միգուցե իր կյանքում ծանր դեպքեր են եղել, որոնք փոխել են նրան: Նույնն էլ դրական կերպարի հետ: Արդյո՞ք նա ունի ձգտումներ և նպատակներ: Հորինեք պատմություններ, որոնք կբացատրեն նրանց բնավորություններն ու որոշումները՝ դարձնելով դրանք ավելի բնական և հետաքրքիր:
2. <u>Չափից շատ իրադարձություն էջերի քիչ քանակում</u>
   Խնդիր. Չափից շատ իրադարձություն փորձում են խցկել սահմանափակ էջերի մեջ: Արդյունքում պատմությունը բավականաչափ չի զարգանում, իսկ մանրուքները բաց են թողնվում: Դրա հետևանքով ընթերցողը կարող է չտեսնել սյուժեում որևէ հետևողականություն և չհասցնել հետևել դրան, ինչը կարող է փչացնել ընթերցանության փորձը:
   Լուծում. Պետք է կենտրոնանալ սյուժեի ավելի կարևոր պահերի վրա, որոնք ամենակարևոր դերն են խաղում կոմիքսի հիմնական թեմաների և կերպարների զարգացման մեջ: Բաց թողնել աննշան, երկրորդական իրադարձությունները կամ ավելի լավ ինտեգրել հիմնական սյուժեի մեջ: Հերոսներին հնարավորություն տալ շփվելու և իրադարձություններին ավելի խորը արձագանքել՝ այդպիսով ստեղծելով ավելի հավասարակշռված և լիարժեք պատմություն:

3. Հերոսները չեն սխալվում, կյանքից ոչ մի դաս չեն քաղում և չեն զարգանում
   Խնդիր. Կերպարները, ովքեր երբեք չեն սխալվում և դասեր չեն քաղում կյանքից, չեն զարգանում և մնում են ստատիկ և անհետաքրքիր: Նրանք կարող են թվալ չափազանց իդեալական կամ անիրատեսական կերպարներ՝ առանց ներքին վարանումների և աճի:
   Լուծում. Պետք է հնարավորություն տալ կերպարներին զարգանալ և փոխվել: Ցույց տալ, թե ինչպես է փորձը ազդում նրանց մտածողության, վերաբերմունքի և վարքի վրա: Թող սխալվեն և սովորեն այդ սխալների վրա, նույնիսկ եթե դա նրանց ցավ կպատճառի: Դա նրանց ավելի շատ խորություն կտա և կմոտեցնի իրական մարդկանց:

Բայց չնայած այս խնդիրներին՝ կան նաև լավ կողմեր: Եվ ընդհանրապես, ինչպես ես արդեն նշեցի, հայկական կոմիքսների ինդուստրիան դեռ զարգացման վաղ փուլում է: Հետևաբար այս բոլոր թերությունները ներելի են, քանի որ հայկական կոմիքսներով զբաղվող մարդիկ դեռ չունեն այդքան մեծ փորձ, ինչքան արտասահմանյան կոմիքսներ ստեղծողները, որոնց տասնյակ տարիներ են պետք եկել, որպեսզի հասնեն այդպիսի արդյունքի: Ամենակարևորը՝ անընդհատ զարգանալ, փորձել նոր բաներ և օրինակ վերցնել ավելի փորձառու մարդկանցից, ովքեր երկար ժամանակ է զբաղվում կամ զբաղվել են կոմիքսներով:

**Աղբյուրներ՝**


- Комикс | Вукипедия | Fandom
- Комикс — что это такое, определение термина в литературном словаре Эксмо
- Վիշապ կոմիքսի շնորհանդեսը
- Վիշապ. Տուրբոկնոջ հարձակումը (2020)
- Ultimate Spider-Man #1, #2, #3, #4, #5 (2000)